

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԲ. ՆԱԽՆԵԱՑ. ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆՑ

ՎՐԱՅ ԴԱՏԱՎՏԱՆ ԸՆԵԼՈՒ

Եթէ կայ դժուարին գործ, մը մատենաս գրական առպարհիքն մէջ, այն է՝ մեզմէ գարերով և տարիներով առաջ գրուած ները կարդալ, և ինչպէս որ կամ ինչ մըտքով որ գրուած են՝ այնպէս դատաստան ընել ու հասկնալ: Ասոր համար մատենաս գրաց վրայ դատաստան ընդողներու առջև գրուած է իրաւամբ այն ընդհանուր և հաստատուն օրէնքն, թէ չիկրնար մէկը իր գաղափարացը համեմատ ուղղել և կարգաւուրել հին մատենագրաց գրութիւնքը, մինչև որ նցն ժամանակի ուրիշ մ'ալ իրեն մոածմանը օժանդակ չը գտնայ. վասն զի մատենագիրք իրարմով կը լուսաւորուին և կը պարզուին. այն պատճառով պէտք է նախ պէսպէս օրինակներով ամբարել միտքը, ընտանենալ ամեն տեսակ բացատրութեանց և ասա քննութեան ձեռք զարնել: Ասոնց հակառակ մտածմունքներ շատ կրնան զըտնուիլ, և ըսել, օրինակ իմն, թէ այս ինչ գրոց մէջ կան անբառ սիսալներ, սակայն թէ որ բերուած օրինակները նայինք՝ շատ անգամհամածայն կը գտնուին գրողին մըտաց հետ, և ընթերցողին մտացը միայն հակառակ երեցած են, բայց այս դատաստան աւելի թարգմանութեանց համար ըսուած է, և այն մեր նախանեաց ձեռքով եղածներուն մէջ. որոնք թերեւս շատ հմաւտ ու տեղեակ. չըլլալով օտարազգի 'լեզուաց' թարգմանած են իրենց դիւրութեանը համեմատ, կամ ինչպէս որ առաջին ընթերցմանէ կարգացեր են: Իրաւոցնէ այս կարծիքը մենք ալ ունեցերենք ե. ունինք ալ, բայց միշտ ջանացեր ենք ապացուցանելու զայն օրինակներով, և այնպիսի օրինակներով՝ որոնք անժխտելիք են մեր և ընթերցողաց մտացը: Վասն զի սիսալ մը մէջ թերեւու ժամանակ՝ պէտք է նաև ցուցընել թէ այն սիսալընքն ինչ պատճառաւ եղած կրնայ ըլլալ, արդեօք հեղինակն ալ այն սիսալման մէջ է, թէ թարգմանուն ուրիշ նման շվիթմանք սիսալեր է. կամ թէ նոյն ձեռագրին

երկրորդ օրինակող մըն է սիսալողն: Ասոնք որչափ ալ թեթև և ոչ ինչ նիւթեր համարուին, սակայն շատ դիտելու բաներ են, որ նախնեաց սիսալներն ուղղելու պատճառու մենք ալ չըլլայ թէ տպիտութեամբ սիսալնք: Խսկ արդի հնասէրք՝ որք նախնեաց գրեթեը տպագրելու ձեռք կը զարնեն, արդեօք որ սիսալները կրնան սրբագրել. հարկաւ նախ զանոնք՝ որոնք թիւր ընթերցմանք յետնոց առաջ եկած են, և երկրորդ՝ զորոնք նոյն խսկ թարգմանն սիսալ կարգացեր է, այլ և միանգամայն յայտնի սիսալ մը իմաստի երեւայ մէջն. վասն զի կրնայ ըլլալ որ թարգմանին ալ իր մտաց ընդարձակ տեսութեամբն իմաստ մը քիչ մը փոփոխած, կամ այս ինչ գործուածի տեղ ուրիշ կերպ մը բացատրեր է: Ամենայն հայ թարգմանութիւնք նախնեաց գրեթե այս դատաստանը կը կրնայ ըլլալն, ասաւել կամ նուազ. բայց մեղ կերեւայ՝ որ շատերն ոչ արդար դատաստանաւ կամ ոչ որչափ պէտք է: Օրինակ իմն, Սուրբ Գրոց թարգմանութեան վրայ տեսութիւններն ալ կը վկայեն թէ շատ վրիպակի կը գտնուին այնպիսի թարգմանութեան մ'ալ մէջը, որ ըստ ինքեան ամենէն անարտան պիտի ըլլար. որովհետեւ կը կարգանք 'ի նախնեաց որ ամենէն մեծ փոյթ ու ինամերն եղեր է այս թարգմանութեան վրայ, և թէ իր տարածուած ըլլալուն պատճառաւ աւելի ծանօթ եղած էր, ամեն զիտնոց հասկընալի եղած. և հիմայ այսօր կիմանանք նոր նոր սիսալներ: Բայց ըստ մեր տեսութեան, ամենաքիչ են Սուրբ գրոց մէջ գտնուած սիսալներն, որոնք ուղղակի թարգմանչին ընծայուին. խսկ հնդամաստենին մէջ գեռ չեմը գտած այնպիսի ստուեր մը:

Վասն զի մէկը թէ որ ձեռագրաց մէջ եղած բոլոր շփոթութիւններուն տեղեակ ըլլայ՝ չիկրնար, կարծենք, այսպէս խրոխտանուիլ թէ շատ սիսալներ գտած եմ այս ինչ

կամ այս տեղ տպագրեալ գրոց մէջ: Այս ձեռվ ըսել կ'ըլլայ թէ ինքն բոլոր այն ձեռագիրներն աչքէ անցուցեր, քններ ու դատեր և այնպէս կը խօսի: այլ կարծեմ՝ թէ սկսելու ըլլայ ամբողջ մարդուս կեանքը չի բաւեր զանոնք մանր մանր զննելու, միայն մէկ զիրք մ'ալ, թող թէ բոլոր տպագրուաճները: Ոչ և ընտիր դատաստան ընելու համար բաւեկան չէ քաղաքի մը տպագրած օրինակն առնուլ եք բաղզատել. վասն զի ինչպէս մեր մէջ, նոյնպէս ուրիշ ազգաց ձեռագիրներն ալ իրարմէ կրնան տարբերութիւններ ունենալ. և ինչ զիտենք թէ նախնիք որ օրինակն առնելին ունին: Վասն զի բուն 'ի մեր նախնեաց յիշատակուին կեսարացւոց օրինակներն և Ազեբսանդրացւոց, որոնք՝ կրնանք կարծել թէ նպաստած են մեր թարգմանչաց կամ սրբագրուած: Այս բաներուս համար կատ զգուշութիւն պէտք է գրոց սրբագրութեան և ուղղութեանն, և ոչ թէ հարեւանցի նկատմամբ մը միայն կարդալով մէկնել:

Առիթ առնուլ բանասիրէ մը մեր քամի մը տպագրած գրոց մէջ նկատած մէկ երիտ երկայսութեանց լուծումը տալու կը ջանանք, որ ինչպէս իրեն, ասանկ ալ այլոց մորին մէջ կրնան տարակոյս մը արթենցունել: Սունց մէջ զիմաւոր կը սեպէ նոյն հարցասէրն Ասկեբերսնի Մատթէի Մեկնութեան 'ի Ս. Ղազար տպագրեալ երկհատոր տպագրութեանն երկրորդ հատորոյն մէջ այն կտորը՝ ուր Սուրբ վարդապէտն Հերովդիակադայ համար խօսելով կ'ըսէ. «Փանզի ըստ օրինացն մեծ թշնամնք են որդւոց, եթէ մարք 'ի տայգերաց ցաւսն իցեն»: Ախալմունքն պիտի ըլլայ: «Եթէ մարք 'ի տայգերաց ցաւսն իցեն» խօսին մէջ իրը թէ իմաստն մթին է. և հարկ ըլլայ անով ընթերցուածն ուղելով այլ ինչ հասկանալ. բայց ես կ'ըսեմ՝ որ եթէ ընթերցուածն փոխել ալ ստիպուինք՝ իմաստը միշտ նոյն պիտի մնայ: Արդ ըստ պարզ շարագրութեան այսպէս կը հասկըցուի իմաստըն՝ ըստ օրինաց՝ որդւոց մեծ նախատինք է՝ եթէ մայրերն իրենց էրկան եղօր (որ է տայգր) ցանկութեամբն լեռնուն կամ ցաւով, ուժացեալ իրենցներէն: Արդ ամենայն որ գիտէ՝ որ Ս. Յովհաննէս Մկրտիչ կը յանդիմանէր զէնթրովդէս ու կ'ըսէր թէ

1 Ոսկ. տպ. 'ի Ս. Ղազար. հատոր Բ, էջ 685:  
Պրա. Դ.

չի վայլեր քեզի որ քու եղօրդէ կնիկը քեզի կին առնուս. չէ միայն իրրե վայելցութիւն, այլ և իրրե յօրինաց արգելեալ. վասն զի «օրէնքն, կ'ըսէ նոյն սուրբ վարդապէտն, հրամայէին կենտանի եղօրօնն առնուլ զիկն մեռելոյն, և որդին որ լինէր՝ յանուն վախնանեալ եղօրօն կոչէր .... Այս թէ որդի մնայր, ոչ ևս այնուկեան կրամայէր ամուսնութիւն... վասն այնորիկ Հերովդեայ, քանզի որդի կայր յառաջին առնէն, չէր օրէն լինել կին Հերովդի: » Արդ յատնի է որ Հերովդէս եղայրն Փիլիպպոսի կ'ըլլայ ըստ աղգականութեան անուանց՝ Տայգր Հերովդիայ. և հետեւաբար ասոնց առ իրեարս կամն նախատինք է որդւոց: Այսպէս նս և նոյն Սուրբ հայրն քիչ մը վերջէ կ'ըսէ համբելով սատանային որոգայթը. « Չորրորդ անգամ, զի աղջկանն վասն որոյ անօրէն հարսանիքն եղեն, թարչել պարտ էր՝ յաղագս ծամականաց մօնն, և անօրէն ամուսնութեանն: » Այսչափս պատմական ոճով բաւեկան կրնայ ցուցընել թէ իմաստն չէ սխալ և թէ տեղոյն յարմար է մեծապէս, թէպէտ յոյն բնագրին մէջ ամենեկին չերեայ նոյն տեղը այնպիսի իմաստ մը: Բաց ասկէ՝ ձեռագիրք ալ մեզի հետ են. ընտիր գրչութեամբ օրինակութիւններ յետ ժամանակաց եղած նոյնը ունին: Իսկ յետ ամենեցուն Յոհաննէս Երգնկայեցին ալ իր Մատթէոսեան մեկնութեան մէջ որ է շարունակութիւն Շնորհաւոյն Ներսիսի մենանութեանն, նոյն տեղը մէզի համաձայն կը կարդայ, « Եթէ մարք 'ի տայգերաց ամուսնանայցին: »

Քայց թերեւս այսչափովս ալ գո՞յ չըլլան բանասէրք և ընթերցողք, և բաւեկան չամարուի Երգնկացւոյ մը վկայութիւնն, իրեք թէ ինքն ալ տեղոյն իմաստին և եթ նայած ըլլայ և ոչ բառական շարագրութեանն, ուստի և ոչ վկայութեան արժանաւոր անձ մը: Արդ ինչպէս ըսինք կանխաւ, Երգնկացին շարայցրող և շարունակող մ'է Յովհաննու Ասկեբերանի Մատթէի մեկնութեանն, և շատ տեղ ու գրեթէ միշտ բառ առ բառ օրինակութիւն մ'է նոյն սուրբ վարդապէտին մեկնութեանն ու խօսքերուն. և նոյն Երգնկացւոյն շարայցրութիւններն զոր ունինք այսօր ձեռութիւնի կը կրեն համաձայն իրարու սոյն խօսքը այսպէս. « Փանզի ըստ օրինացն մեծ թշնամամբ զէնթրովդէս ու կ'ըսէր թէ

մանք էին որդւոց՝ եթէ մարգ 'ի տայգերաց (կամ 'ի տագերաց) ամուսնանայցեն. իսկ սա դորձակից ևս լինէր և զորոգայթն կազմէր : Երզնկացւոյն բազում օրինակներէն որոնք այս ընթերցուածն ունին մէկն զըրուած է 'ի ուժու (1674) մաքուր, յստակ և անսխալ գրչութեամբ. իսկ ուրիշ մ'աւելի սիսալագիր է, որուն որոշեալ թուական մը չերմաք՝ թէպէտ գրել տուողն ծանօթ ըլլայ և կը յիշուի 'ի յիշատակարանին. իսկ երրորդ օրինակ մ'աւ որ վերի ընթերցուածն կը կրէ՝ գրուած է 'ի 1787 'ի Սարգսէ ումեմնէ գրագրէ, և սրբագրեալ Գէորգ Տէր Յոհաննիսեան դպրին ձեռքով՝ Վարդան բաղչեցւոյն օրինակին վրայէն. և այն խօսքն կայ յէջ 260, մաքուր գրչութիւն է և անսխալ:

Բայց՝ ասոնց թերեւս և ոչ մէկն մեր բա-

նասիրին փնտուածն է. հիմայ գանգ բուե իրեն ընթերցուածին ուղղութեանը թէ ինչպէս կ'ուզէ կարդալ, զոր մենք ալ յամարութեամբ կարդացեր էինք երբեմն, բայց որովհետեւ լիսկերերանեան ձեռագիր չէ՞ր չէինք համարած ուղղագրելի անով մեր օրինակները: Գիտեն բանասէրք, մանաւանդ մեր հարցանէրն որ միայն Երզնկացին չէ Շնորհալոյն մեկնութեանն շարայրողն, այլ ուրիշ մ'ալ կամ ուրիշ ալ կը գտնուին նոյն աշխատութիւնն ընողք: Արդ մեր ներկայ յիշելու Շարայրարութիւնն կը կոչուի՝ « Արխատակեայ և Եփրեմի նորին աշակերտի », գործ մը՝ որուն օրինակողքն են Աստուածատուր և Գրիգոր՝ որոնք նոյն ձեռագրին մէջ կը յիշուին: Արդ այսն ձեռագրիս յէջ 390<sup>0</sup> հին գրով գրուած կը կարգացուի:

## զի զվրէժ Ծշնամանացն նորա պահանջէր մարգարէն .

### քանզի լստ աւրինացն մեծ Ծշնամանիք էին որդւոց եթէմարք ի տայգերացն յա եսանիցեն .

ուրեմն եթէ այս ձեռագրիս հետեինք՝ պիտի ուղղագրենք զընթերցուածն՝ երէ մարգ 'ի տայգերաց յասանիցեն կամ յօսանիցեն. բայց Նրգնկացին ըստ ամուսնանայցեն, և մեր օրինակներն կարդացին 'ի ցատն իցեն. Հիմա կը մնայ որ բանասէր մը այս երեք բառերու նշանակութիւնը մնդի սորվեցունէ: Ու թէ որ մէկն 'ի ցատն իցեն խօսքին զօրութիւնը չուզեր կամ չի կրնար հասկընալ բանայ սուրբ Գիրըք, ուր 'ի Դանիէլին կը կարդանք՝ Շուշնայ պատմութեանն մէջ, համար 10. « Էին երկորեան հարեալ 'ի նմա, և չպատմէին միմեանց զցան իւրեանց, զի պատկառէին պատմել զցանկորին իւրեանց »: Այսու հանդերձ եթէ բուն Ռազմական ուղարկութեան ուղարկութեան կոճեր ալ գտնուին ու ձեռագիրներ՝ որոնք այդ նոր մէն ալ կարդան մեզ յասանիցեն (յասանցուն), մենք չենք միստեր իմաստին նոյնութիւնը, այլ նոյնպէս կը հասկընանք, ինչ որ հասկըցեր էինք 'ի ցատն իցեն խօսքով:

Երկրորդ, ասոր յարակեց խնդիր մ'ալ կար Պիսիդիայ Պատառիկն Մացընելու, զոր

մենք անցեալ Պրակաց մէջ հարեւանցի ըստ էինք որ եթէ այլը ալ գտնեն ասոր (Պիսիդիայ քերթութեան) պակասներն ու ամբողջացնեն՝ իրենց մատենագրանց միջէն, հրատարակեն յօգուտ հայտգէտ բանասիրաց: »: Այս խօսքով յայտնի կ'երեւայ որ մենք ալ կը կարծէնք ու անկարելի չէինք համարած ասոր գիրքու. և մեր նպատակն այն չէր գործոյս մէջ որ վիճինք ցուցընելու թէ արգեօք այս գիրքս 'ի նախնեաց թարգմանուած է թէ չէ, միջդեռ կը հրատարակեէնք արդէն նոյն գործոյն 84 տողն, զոր գտած էինք ձեռագրի մը Քերաւականութեան վարդապետութեան վերջը, և գործն ստորակէտով մը կը վերջանար, յայտնի նշան որ ամեզողաւթենէ ընկած ու պակսած էր: Դարձնալ մեր նպատակն այն չէր որ նախնեաց գրոց մէջէն ասդիէն անդիէն գտածներն ալ մէջը խառնենք լրացընելու համար, առանց նայելու որ այդ մասերն ուրիշ թարգմանութիւն կրնան ըլլալ կամ համառօտարար ժողոված: Զոր օրինակ մեր Վարդան վարդապետն որ Ալարածոց

մեկնութիւն մը գրածէ, նոյն գրուածին մէջ  
Ս. Բարսղէն, Փիլոնէն, Եղիշէն, Աստուա-  
ծաբանէն և յայլց օրինակներ կը բերէ, որոց  
մէջ կան նաև Պիսիդեայ տողեր: Եւ գիւրու-  
թեան համար քովը՝ ի լուսանցման նշանա-  
կուած են՝ ի ձեռագրին իւրաքանչիւր հեղի-  
նակաց անուանքն Պիսիդ. Բրու. Փիլ. Եղիչ. և  
այլն, որով մէկը կրնայ զանոնք իմանալ ա-  
ռանց մեծ աշխատութեան մը: Բայց խնիրը  
կը մնայ քննելու թէ արդեօք այն թարգմա-  
նութիւններն վստահանալիք են, կամ ար-  
դեօք բուն ազդիւրէ հանուած են, թէ ոչ ինչ-  
պէս ամենայն հարց սովորութիւնն է վկա-  
յութիւններու իմաստովը կը բաւականան  
և նիւթական շարագրութեան կերպին չեն  
նայիր. որով, արդեօք կրնանք զանոնք բը-  
նագրին հետ զանցել և մէկ մարմին ձեւ-  
ցընել: Այս դիտելու համար՝ իշնանք քննե-  
լու վարդանայ վկայութիւն բերած օրի-  
նակներն և տեսնենք թէ արդեօք մեր մը-  
տաց գոյչացուցիչք են: Օրինակ իմն, Վար-  
դան՝ ի Անցօրէից Արրոյն Բարսղի վկայու-  
թիւններ բերելով կ'ըսէ. « Եւ խուար ՚ի  
վերայ անդնդոց. զայս բան խաթարեն խա-  
ւարեալ իմաստունքն Յունաց և խոտեալ  
աղանդն Անսիեցուց. զարէն յայտ առնէ  
ասեն, և չար յանձնէն եղեւ ասեն. և հակա-  
ռակ է նա բարույ և թշնամի հշմարտու-  
թեան. և որպէս Աստուած լցոյ է, որ հա-  
կառակ է նման խաւար է և անդունդք:  
Հիւղն, ասեն, է իրբե զմանրամաղ փոշին  
որ խաղայ ՚ի շոշն որում կարօտացաց Աս-  
տուած, ասեն, և արար անտի զամենայն  
ինչ: Ահաւասիկ կոտոր մը որ բոլորովին  
քաղուածոյ է ՚ի Բարսղի Վեցօրէից. վասն  
զի բոլորն ալ գտնելու համար բանալու է  
տպագրեալ ՚ի Ս. Ղազար (1850) էջ 29, 50,

ճառ Բ. ուր կը սկսի, ո Եւ խաւար ունէր  
զերեսս անդնդոց », և ինչուան միւս նոր  
տողով սկսած պարբերութիւնն կցկտուր  
բաւերը կրնանք գտնալ, բայց շարագրու-  
թեան համաձայնութիւն ամեննեին ընդու-  
նայն է վիճակը, Ու դարձեալ կ'ըսէ. « Խա-  
ւարն ոչինչ է այլ քան եթէ ոդ անըսյս և  
ստուեր տեղեաց ինչ. (տես Վեցօր. էջ 29).  
« զոր օրինակ եթէ ՚ի միջօրեայ ժամու հար-  
կանից ոք տաղաւար և յամենայն կող-  
մանց փակիցէ և չթողուցու բնաւ ծերպս  
ինչ ՚ի մուտս լուսոյ, խոր խաւար գործէ ՚ի  
յարկին ». (տես Բրո. էջ 34): Դարձեալ  
ուրիշ տեղ մը կ'ըսէ « Հոգի Աստուածոյ շըր-  
ջէր ՚ի վրայ ջուրց. յոյն ասէ Հողմ Աստու-  
ծոյ շըրջը. եթէ վասն Հողմոյ կարծի ընդու-  
նելի է, զի ծնունդ օդոյ է Մրբիչ նորին և  
բարեխառնութիւն ամենայնի, բայց խնդիր  
եղեւ ՚ի մէջ առաջնուցն և ստուգեցաւ վասն  
Հոգւոյն սրբոյ ասել ». (զայս ալ կրնանք  
գտնել Ս. Բարսղի Վեցօրէից 35 երեսն).  
խսկ այն միւս Խրթնագոյն անիմանալի շա-  
րագրութիւնն զոր կը կարդանք Վեցօրէից  
մէջ նոյն տեղ (էջ 35), « Վասն այնորիկ ա-  
սեն ժամապահ գիրք մուծանել միանձնու-  
թեան և զարմանալով զիշատակ նորա ».  
Վարդան բացացայտ այսպէս կը գրէ.  
« Քանզի ժամապահ եղեն զիրք յայտնել  
զմիանձնութիւն Հոգւոյն յաշխարհագոր-  
ծութեան աստ ». թէպէտ ոչ ճիշդ թարգ-  
մանելով ՚ի յունէն:

Բայց աստնք թերեւսնիւթիւն գուրս համա-  
րուին, գանք բուն Պիսիդեայ Պատառիկ-  
ներուն զոր Վարդան կը յիշէ. բայց նորերն  
չիշած նախ մէջ բերենք անոնք որոնց ար-  
դէն բուն թարգմանութիւնն տպագրած  
էինք և տեսնենք որն է հարազատն.

### Պիսիդեայ .

Ո՛Վ մշտաշարժ երկնի բնութիւնն  
Գնդաձեւ իմաստագործ ձեղուանցն.  
Բարձրութեամբ լայնացեալ և այսքան հաս-  
(տիւք,  
Սարփիսի եղեալ, յոշնչի հաստատեալ.  
Նախահայեաց սրատեսութեամբ ոմն ա-  
(սաց...  
Ըստ աղօտարար ակնարկութեանն տեսու-  
(թեան,  
Կամ գունդ կիսակտուր հեցի օրինակաւ...

### Վարդանայ .

Ո՛Վ մշտաշարժ երկնի բնութիւնն  
Գնդաձեւ իմաստագործ ձեղուանն.  
Բստ բարձրութեան և խորութեան լայնա-  
(ցեալ  
Անհաստիւք սարսիսեալ յոշնչի կառուցեալ  
Նախահայեաց ոմն ասաց  
Ընդ աղօտ աեսեալ.  
Գունդ կիսակտուր հեցի օրինակաւ.

Պիսիդեայ.

Ի ներքուստ կուսէ այլ երեխ թաքուցեալ...  
Կայիշը շարժի, և շարժիք կայ մնայ  
Այլ որպէս զի կարգ գնիլ ստացուածոց  
Գեղեցիկ . . . . .  
250 Զոմն կարօտ լինել ջահին

Վարդանայ.

Ի ներքուստ կուսէ այլ եւի (երեխ) թաքու-  
(ցեալ).  
Կայիշը փաղչի և շարժիք կայ և մնայ,  
Այլ զի գեղեցիկս գնիցէ կարգս  
(Գեղեցիկը կը միացընէ վերինին հետ).  
Զիսոնան արար կարօտ մեծի ջահին:

(Թէ որ համարինք Վարդանայ յայն բնագրէն  
անմիջապէս թարգմանած ըլլառոն փաստ մէ  
գտնէլ, առա պայման ունի ման օնօսան ըստ բնա-  
գրին՝ Զամ լինել կարգացած կ'ըլլայ ունի մէն նորան  
և թարգմանած վեճառուն):

Ետքը կարգը աւրելով և յառաջ ընթանալով ըստ յունին 'ի թիւն 249, նոյն տողին  
վերջին բառը կ'առնու և կըսէ՝ ջարեգակն ասեմ, և ետքը կը շարունակէ.

Պիսիդեայ.

220. Զհասարակացն ակն, զգեղեցիկն բիր,  
221. Զամենակերակրիչ հուր՝ յորժամ, և  
այլն.  
222. Իսկ գերիկիլոյ քան զերկիրս մշակ  
տունչեան.  
253. Որպէս զի լիցի խառնումն ինչ որպէս  
յամունութեան  
256. Եւ ըակցեալ 'ի ծնանել երկոցունց  
257. Զգեղեցիկ ծնունդու զսերմանցն տը-  
զայս.  
263. Որպէս զի աշխարհս այս իբրև զտուն  
մի մեծ,  
264. Անխախուտ ցուցցի չորից սեանց օրի-  
նակաւ,  
265. Առեալ 'ի ներքուստ հաստատութիւն  
ընդդիմանեցուկ:

Վարդանայ.

220. Զհասարակաց ակն, լզգեղեցիկ բիրն,  
221. Զամենակերակրիչն հուր . . . . .  
222. . . . . . զմշտակն տունչեան.  
253. Որպէս զի լիցի սոցա նշուլիցն իտառ-  
նումն ինչ որպէս յամունութեան.  
256. Ծնանել և սնուցանել  
257. Զսերմանեացն տղայս.  
263. Ի տանս այսմիկ  
264. Կառուցեալ 'ի չորից սեանց,  
265. Ի ներքուստ հաստատութեան ընդ-  
դիմանեցուկ:

Աս փոքրիկ օրինակներով յայտնի տեսնուե-  
ցան Վարդանաց կոսորակներն, որ բոլո-  
րովին կրծատած է և ոչ նայած բնաւ յու-  
նականին տողերուն ճշութեանն որ գե-  
ղեցիկ կերպով կը տեսնուի մեր Պատառի-  
կին մէջ: Մեր առաջուան տպագրածն կըր-  
նանք յունին կետ ճշդի բառ առ բառ բաղ-  
դատել, որով կրցեր ալ էինք յունական  
տողերուն կետ համաձայն բերել, իսկ Վար-  
դանաց բերածներն ով կընայ համաձայնե-  
ցընել: Նոյն իսկ այն տողերն որ մերինին  
մէջ չկային, և Վարդան կը յիէ, տեսնենք  
ինչպէս կրնան համապատասխանել յու-  
նին:

Ըստ յունին 'ի 132 տողին կըսէ՝ «Փանզի  
մեծ է, որպէս Աստուծոյ փոքրիկ աթոռ,  
Վարդան կ'ըսէ Մեծին աստուծոյ փոքրիկ ա-  
ռոս».

Ի 125. Ոյինչ և սորա լափ, բայց անչա-  
փորին. Վարդանայ բերած տուղերէն ամե-  
նէն համաձայնն այս է ընդ յունին:  
Յարունակելով Վարդան 132 տողէն,  
կըսէ՝

133. Գնալով ոչ գագարէ  
134. Անչն գալարեսցէ բան՝ որ կառոյց  
զնա:

Վարդանայ մէջ կը տեսնուին դարձեալ  
ուրիշ տողեր, բայց միայն յիշտակութիւնը  
են բնագրին խօսքերուն և ոչ թէ թարգմա-  
նութիւն յունին. վասն զի Վարդան ուզե-  
րով խօսիլ ընձու, ուղտու, շան, գայլոց և  
ուրիշ կենդանեաց վրայ՝ Պիսիդեայ խօս-  
քերը կ'առնու մէջ, միայն կենդանւոյն ա-  
նունը և դարմանը նշանակելով, որուն մէջ

կան ալ քանի մը երեւլի սխալներ ընդ  
այժմու յունին բաղդատելով.

947, 348, 949, այս երեք տողերուն իմաստ-  
ները խառնելով կ'ըսէ Վարդան. «Ինձ գա-  
լոր կեղեւով կազնոյ մասքրէ զախտու և զա-  
րին վայրենի ընծու ». Փոխանակ ընծու  
յոյն կըսէ այսու արիւն :

950. Ուզու զայրեցած մաղձ փըսխէ գոնեղո  
ուսեղով.

951, 952. Հուն դալար սէզ ուտելով ընկե-  
նու զանաւ մաղձ :

953. Գայլք հող ուտել, և նապաստակք  
զբնդունս :

954. Որիւծ զկապիկ, և նոքա գգորտու :

955. Նոխազ զսակամնն . . . . .

958. Եւ արագիլ ուտէ զօճս և ոչ ախտա-  
նայ :

Խոկ աւելի անճիշտ թարգմանութիւնն է  
կատովելքոսինն և Անքիլոսինն, որուն  
հետքն հազիւ երեայ ՚ի յօյնն. զլերջինն կը  
կոչէ՝ ոչ իրեւ կենդանուոյ մը անուն, այլ  
սոսկ իրբե մակդիր՝ կողամայք, յն. ուլուրո-  
մոյթք, իբր կողն՝ է միանդամայն և արգանդ  
(յն. տող 1055).

Ցետ ցուցընելու այս ամենն՝ յուսամք որ  
ընտիր գատաստանի ետևէ եղօզ մը չի կա-  
րենար. ու չուզեր այս Վարդանայ յիշատա-  
կեալ առղերն Պիսիդեայ Պատառիկին պա-  
կասն լրացընելու ծառայեցընել. վասն զի  
թարգմանութիւնն մը ողջ և ամբողջ ըսուե-  
լու համար, պէտք է ու հարկ անհրաժեշտ՝  
որ ամեն կտորներն իրարու յարակից ըլ-  
լան, և ոչ եթէ շատ մը անյարիր և անկապ  
մասերով իրարու հետ զօդած. և միան-  
դամայն նոյն գրչէ և նոյն դիտմամք գը-  
րուած պէտք է որ ըլլան. Վասն զի յայտ-  
նապէս կընամք ըսել որ Վարդան այնպիսի

1 Եւ նուա՝ յօյնն և խորապէտ, այս երկու բառից  
նման գրութենէն խարսւելով՝ կամ թարգմանն  
կամ Վարդան :

միտք չէ ունեցած մեզի Պիսիդեայ կտոր-  
ներն աւանդել, այլ ինչպէս ուրիշ գրոց  
վկայութիւններն առած էր՝ նոյնապէս Պիսի-  
դեայ գրգէն կամ անձամք թարգմանած  
կամ թարգմանածին մէջէն քաղելով՝ իրեն  
պատշաճ դատած վկայութիւնները ժող-  
ված է :

Բայց բուն խոկ ձեռագրին նայելով, նոյն  
խոկ այդ Պիսիդեայ Պատառիկն թերեւս  
Ստեփանոս Այինեցւոյն կամ Դաւթի կամ  
ուրիշի մը Քերականական վարդապետու-  
թեան օրինակ դրուած է. վասն զի յետ  
տաղաչափութեան և վանկերու քանա-  
կութեան վրայ խօսելու կ'աւելցուի այս  
կտոր մը քերթուածն . անմիջապէս ՚ի  
վերջն քերականութեան « Քառամանակ՝  
Մաշոց, (Մա՞; գ. գիր, և ասցն գ. զ. և  
քառամանակ) ». զի առաջին վանդն այբն  
լիածայն է, և շայն կիսածայն. յերկրորդ  
վանդն՝ ո, սուզ, և ց կէս, և գորա քառա-  
մանակք կոչին ». ետքը անմիջապէս կը  
յաւելուն Պիսիդեայ է պատառիկս, և գրե-  
թէ չորս ու կէս էլ բռնած է ձեռագրին  
մէջ:

Այսափս հերիք կը համարինք հիմկու-  
հիմայ երկու առաջարկեալ խնդրոց համար,  
բայց ասով ըսել չէ մաքերնիս թէ նախ-  
նեաց գրութիւնքն կամ օրինակութիւնքն  
կամ տպագրութիւնք բոլորպէին անարատք  
ըլլան ՚ի գրիպակաց, այլ միայն այս պէտք  
է գիտնանք որ շատ զգուշութեան և հըմ-  
տութեան կարառութիւն կայ ողջ գտ-  
տասատան ընելու իւ աւելի աղէկ Կըլլայ  
թերեւս փօխանակ մէկմէկ բառերու վրայ  
ցամաք ցամաք խօսելու ջանալ աւելի հե-  
տաքննական և ամբողջական մաքուր տը-  
պագրութիւններ ՚ի լոյս հանել, որով ազ-  
գային ջանքն ու ազգասիրութիւնն արծար-  
ծի և նախնեաց սէրն աւելնայ յուսումնա-  
սէրս. Մեր փափաքն այս է, զոր ջանամք  
նաեւ արդիւնաւորել:

